

ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

ԶՈՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Եղեգնաձորի շրջանը հարուստ է պատմական և ճարտարապետական հուշարձաններով: Այդ առումով հատկապես նշանավոր է պատմական Եղեգիս (այժմ՝ Ալպյազ) գյուղը, որի շրջակալքում է գտնվում միշենադարյան ամրաշինության արվեստի փայլուն օրինակ հանդիսացող Սոբատարերդը: Հայ ճարտարապետության պատմութան ուսումնասիրության համար կարևոր են Յահացրաի հուշարձանախմբի առանձին կառուցները և Եղեգիսի շրջակայքում տարքեր ժամանակակիցներում վեր խոյացած կոթողները:

Պատմական Եղեգիս գյուղն անցել է զարգացման երկու շրջան: Առաջինը կապված է 10—11-րդ դդ. Սյունիքի թագավորության բարգավաճման և երկրորդը՝ 18-րդ դարում կապված Օքբելյանների իշխանության հաստատման և հրա վարչական կենտրոնի դառնալու հետ¹: Հենց այդ ժամանակ, 13—14-րդ դդ., Տարսային իշխանի որդի Ստեփանոս Օքբելյանը կառուցում է ս. Ստեփանոս կամ Զորաց Եղեցին:

Այս կառուցվածքը իր յորահատուկ ճարտարապետական ձևերով, հատակագծային և տարածական լուծումներով աներկնելի է մեր արվեստում: Վերջին հանգամանքը և ճարտարապետական ձևերի վերլուծությունը

հնարավորություն են ընձեռում և ներառարար վերագրելու Զորաց Եղեցիցու կառուցումը կամ անմիջապես ճարտարապետ Մոմիկին, կամ նրա դպրոցին հարող մի անհայտ վարպետի:


Մեր անվանի գիտնականներից Ս. Բարխտարյանը, հետազոտելով Ամաղոի Նորավանքի կառուցվածքները, եկավ այն եղբակացության, որ Բորբելաշեն երկիրական Եղեցին հանդիսանում է Մոմիկի ստեղծագործությունը: Նա գրում է. «Մոմիկ վարդապետի կառուցած երկրորդ հուշարձանը գտնվում է Նորավանքի բակում. հուշարձանների գլխավոր խմբի հարավ-արևմտություն (արևներքում ողղումը՝ Յու. Թ.): Սա շատ յորօրինակ և հազվագյուտ արվեստի գործ է. երկիրականի է և պսակված է եղել սյունազարդ գմբեթով»²:

Սարա ևս շարունակում է. «Նորավանքի հուշարձանները ոչ միայն Օքբելյան տոհմի, այլև 13—14-րդ դդ. հայկական արվեստի պանթեոնն են: Այդ թանգարանի ստեղծագործական աշխատանքների մեծագույն մասի հետինակները Սիրանես և Մոմիկ վարպետներն են, որոնց տաղանդավոր ստեղծագործություններն են ոչ միայն մեր նկա-

¹ Հ. Ս. Եղիազարյան, Ազգագրեկոլի շրջանի կողմանության մեջ ճարտարապետական ձևերի վերլուծությունը, Երևան, 1955, էջ 58:

² Ս. Բարխտարյան, Միշենադարյան նայ ճարտարապետական և բարողործ վարպետներ, Երևան, 1963, էջ 83:

բագրածները, որոնց վրա նրանց անվան բնշառակությունները կան, այլև բազմաթիվ որիշներ, որոնց մեջ չեն բնշառակությունները»³:



Նկ. 1. Չորաց եկեղեցու արևմտյան մուտքը
վերանորոգումից առաջ

Ալայաց գյուղում պահպանված, 1708 թ. կառուցված ս. Աստվածածին եկեղեցու հիմքերը և հատկապես շրամուտքն ավելի հին են և ոճական առանձնահատկություններով իիսուս մոտենում են Սոմիկի թղթած ժառանգությանը: Այստեղ կառուցված է Սոմիկի արվեստին հատուկ խոշոր ստալակտիտներով զարդարված կամարադեղ հենված զույգ պունիքի փեղի վրա (Ամառու Նորավանքի Բուրդեկաչեն եկեղեցին, Ապիտակավոր):⁴ Այդ շրամուտքի ոճին է մոտենում նաև Եղեգնաձորի շրջանի Թանահատի և Նշան կիսավեր եկեղեցու շրամուտքը: Վերջինս նոյսակես կարելի է վերագրել Սոմիկի ստեղծագործությանը: Հաշվի առնելով Ս. Բարիուղարյանի նշած թեզը և մեր դիտումները, մենք կարծում ենք, որ Չորաց եկեղեցին է, բոլոր տվյալներն ունի համարվելու Սոմիկի ձեռքի գործը: Հատկապես դա արտահպութել է արևելյան ճակատի եռանկյունի խորշերի կառուցման ձևում, որը սերտորեն կապված է Արենիի եկեղեցու արևելյան ճակատին կառուցված խորշերի կառուցման ձևին և համարյա կրկնում է այն:

Նշված ենթադրությունները դեռ պետք է բազմից օրինակներով և կովաններով ստուգվեն, սակայն մեզ հրանք անհիմն չեն թվում: Հատկապես մեծ նշանակություն կունենա կառուցման ստույգ ժամանակը պարզելու խնդիրը:

Եկեղեցու ճարտարապետական ձևերի առանձնահատկությունները մեզ էն, ինչպես և մի շաբթ հետազոտությունների, համոզում են, որ

³ Ս. Բարիուղարյան, նոյնը, էջ 84:

⁴ Յու. Ա. Թանահան, Շ. Ռ. Ազատյան, Սոմիկը որպես ճարտարապետ, «Լշմիածին», 1969, № գ:

այդ սրահաձև, փոքրիկ կառուցվածքը, որը իր մեջ է ընդգրկում միայն արևելյան արսիդան զույգ ավանդատներով և զույկ է դամբիճակին մասից, ծառայել է իրեն եկեղեցի զույգի համար⁵:

Եկեղեցու արևմուտք պահպանված պատերի մնացորդները, որոնք եզրերում են հարթակը և բացօթյա դամբիճ են միշեցնում, հավանական է, ծառայել են բազմաթիվ աղյուսարելու պատսպարելու համար:

Հուշարձանը մեզ է հասել համեմատարար պահպանված վիճակում, սակայն շրջապատի բնակիչները բանդել էին նրա տանիքների սալերը և օգտագործել այլ նպատակով, որի պատճառով հուշարձանը դատապարվել է դանդաղ քայլայման բնության ուժերի ազդեցության ներքո: Նոյն բախտին էին արժանացել նաև հյուսիսային



Նկ. 2. Չորաց եկեղեցու արևմտյան ճակատը
վերանորոգումից առաջ

ճակատի երեսապատերի գգալի մասը և հատակների սալերը: Լորջ վճակածք էր ստացել արևմտյան ճակատի կամարակապ բացվածքը, որից մնացել էին միայն պունի և խոյակների առանձին մնացորդները (Նկ. 1, 2): Եկեղեցու բիվերի գգալի մասը խախտված էին (Նկ. 3), ուստի վերանորոգման աշխատանքների ժամանակ բոլորը վերաշարվեցին, ապակառող մասերը լրացվեցին նոր տաշված բիվերով: Ծրջապատի մաքըրման աշխատանքների ժամանակ գտնվեցին տանիքի սալերի մնացորդները կիսակլոր եղունու և մի քանի շթաբարային քարեր, որոնց վրա պարզ նշանակում էին կիսակլոր եղունուները: Ենթադրում ենք, որ վերջիններուն եղուել են ցածր լանջերի տանիքների վերին ծայրերը: Արևմտյան ճակատի մոտ հայտնաբերվեցին մուտքը ձևավորող երկու միակոր բազալտից պունիներ, որոնք ունեին կիսակլոր և ուղղանկյուն տաշվածքներ: Այդ պունիների երկու խոյակները գտնվում էին հոյի մակերեսին և արտահայտվել էին չա-

⁵ Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 146:

փագության մեջ: Հոդի տակից հայտնաբերվեցին նաև կենտրոնական կամարի մի քանի քարերը, որոնց օգնությամբ հնարավոր նողակ վերականգնել ալիս: Բացի այդ կամարի քարերից, գտնվեցին նաև գավթի մուտքի կամարի քարերը, սակայն նրանց տեղադրել հնարավոր չէր, տվյալների տղության պատճեռով:

Հյուսիսային սյան խարիսխը բացակայում էր, և բոլոր փնտրումներն ու պրատումներն արդյունք չբերեցին: Ստիպված տաշվեց նորը և տեղադրվեց՝ պահպանելով հնի չափերը, որոնք համեմատության կարգով վերցրին պահպանված խարիսխց, իսկ եղունների չափերը ճշտվեցին սյան կտրվածքի չափերի համաձայն: Այսպիսով վերականգնվեցին մուտքը ձևավորող երկու սյուները իրենց խարիսխների և խոյակների հետ: Կամարնե-



Նկ. 3. Զորաց նկեղեցու ընդհանուր տեսքը հյուսիսարևելքից վերանորոգումից առաջ

Ծշտվեց եկեղեցու կենտրոնական և փոքր կամարների պարագան լինելը, որը առաջին նախագծում արտահայտված չէր՝ չափագրական տվյալների ոչ լրիվ լինելու պատճեռով: Երկրորդ նախագծում ճշտվեց նաև մուտքի ձևավոր քարերի փոխադարձ դիրքը: Նրանց ուղղանկյուն մասերի վրա, դեպի բացվածքի ներսը ուղղված մակերեսներին, փորագրված էին եղել խաչեր (Ակ. 4), որոնց դասավորությամբ հաջողվեց քարերի ճիշտ տեղադրումը: Սկզբնական փորձնական տեղադրման ժամանակ նրանք շրջված էին որվել, այսինքն գլխի վրա: Փորագրված խաչերը օգնեցին այդ հարցում ճիշտ կողմնորոշվել և ուղել սխալը:

Հարավային կողմի սյունը սաստիկ ջարդությամբ առաջացած էր, այդ կապակցությամբ ստիպված տաշվեց և տեղադրվեց պակասող մասը լրացնող նոր հատվածը, որը տեղադրվեց նին խարիսխ վրա, որը պակասող մասերը լրացվեցին բևսոնով: Բևսոնյա այդ լրացումը, ինչպես ընդունված է մեր հուշարձանների վերանորոգման մեջ, տարբերելու նըսպատակով, կատարվեց մի փոքր խոր ընկած:



Նկ. 4. Զորաց նկեղեցու արևմտյան ճակատը վերանորոգումից հետո

րի կրունկների բարձրությունները պահպանվեցին համաձայն պատի վրա պահպանված բարձրությունների:

Կամարների վերականգնման ժամանակ դժվարություն առաջացավ նրանց պարագանելությունը որոշելու ընթացքում: Զափագրության վրա պահպանված մնացորդներից պարզ չէր այդ կամարների կառուցման ճիշտ ձևը: Տեղում երկար պրատումները պարզեցին նրանց երկկենտրոն լինելը: Սկզբում նրանք իրականացվել էին որպես միակենտրոն կամարներ, սակայն Հատուկ գիտա-վերանորոգման արտադրական արվեստանոցի աշխատակիցների հանձնաժողովի (Ա. Հարությունյան, Ռ. Այրինյան, Ս. Սալոմյան) օգնեց կանխելու այդ թերությունը: Պարզվեց և ճշտվեց նրանց երկկենտրոն լինելը, և կա-

մարտերը վերականգնվեցին իրենց նախնական վիճակով:

Վերանորոգման նախագծի երկու տարրերակները 1971 թվականին կազմել եր տողերին հեղինակը՝ ճարտարապետներ Ս. Մար-

երեսապատճեն և սպառյան համար օգտագործվել է Միսիանի բազալտ քարը, որի կիրառմանը դեմ էին ճարտարապետության դոկտոր Վ. Հարությունյանը և մենք, սպառյան աշխատանքների վերջում (մուտքի



Նկ. 5. Զորաց եկեղեցին վերանորոգումից հետո

գարյանի և Ն. Պապույսանի 1957 թվականին կատարված չափագրության հիման վրա: Տեղում իրականացվեց նախագծի երկրորդ տարբերակը:

1971—72 թվականների ընթացքում աշխատանքները կատարեցին բարտաշ-որմանադիմեր Կ. Մանարյանի, Պ. Մարարյանի և Դ. Դանիելյանի ղեկավարած բոփադները՝ իրար հաջորդող ճարտարապետներ Գ. Դանիելյանի և տեխնիկ Հ. Գասպարյանի ղեկավարությամբ:

Ցավոք ավագ խորանի հատակի և տանիքների ցածր լանջերի սպառյանը իրականացվեց ոչ պահանջվող որակի:

Կամարները և երեսապատերը՝ Հ. Գասպարյանի օրորը) սկսեցին օգտագործել Ալայազի շրջակալիքից հայտալրված բազալտը, որը իր գույնով և որակով ավելի էր համապատահանում հուշարձանի վրա կիրառված քարերին և նախագծի հանձնարարականներին (Նկ. 5):

Աշխատանքները կատարվել են Պատմական հուշարձանների պահպանման հայկական ըմբերության պատվերով և գումարներով:

Այսպիսով իրականացված հայ ճարտարապետության մեջ եզակի Զորաց տաճարի վերանորոգումը և ապահովվեց նրա կյանքի հարատևումը: